

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ

301 թվին Ապոստոլ Գրիգոր Պարթևի քարոզներով հայոց Տրդատ թագավորն ընդունեց և հռչակեց քրիստոնեությունը իբրև պետական կրոն և բովանդակ հայ ժողովրդի հետ մկրտվեց: Այդ ժամանակ, 303 թվին հիմնվեց Էջմիածին տաճարը և կաթողիկոսությունը Արշակունիների մայրաքաղաք Վաղարշապատում:

Ապոստոլ Գրիգորը կոչվեց Հայաստան աշխարհի «Սուրբ Լուսավորիչ» և եղավ առաջին կաթողիկոսը, քահանայապետը, Եկեղեցու բարձրագույն իշխանը:

Էջմիածնի հիմնարկության պատմական փաստը հյուսված է հրաշքներով, առասպելներով (լեգենդա) և ժողովրդական ավանդություններով: Դեռ չորրորդ դարում ստեղծված ավանդության համաձայն, Լուսավորիչը իր տեսիլքի մեջ տեսնում է, որ Քրիստոս, Աստծու միակ Որդին, Միածինը, իջնում է երկնքից և նրան ցույց է տալիս այն վայրը, ուր պիտի կառուցվի տաճարը և լույսերի մեջ գծված տաճարի կաղապարը (մոդել):

Այդտեղից ծագում է տաճարի անունը՝ Էջմիածին, այսինքն՝ Միածինը իջավ:

Ժողովրդի ավանդությամբ, Քրիստոս նշեց շինել տաճարը այն վայրի վրա, ուր Նոյ Նահապետը ջրհեղեղից հետո՝ Արարատ լեռից իջնելով շնորհակալության զոհ մատուցեց Աստծուն: Դարձյալ ժողովրդի ավանդությամբ, Տրդատ արքան, որ հսկա մարդ էր, իր ուսերին դրած բերեց Արարատ լեռից ահագին ժայռեր, որոնք կազմեցին տաճարի անսասան հիմքերը:

Հնության հմայքով օծված, հրաշքներով, ավանդություններով նվիրականացած Էջմիածինը դարձավ հայ ժողովրդի համար ազգային ամենաառաջին սրբավայրը: Հայ ժողովուրդը հավատաց նրա հրաշագործ զորությանը, երկնքից ուղարկված նրա էությանը: Եվ այսպիսով նա ներքնապես ամրացած՝ կարողացավ դիմանալ բախտի հարվածներին և հարատևեց դարեր ու դարեր:

Էջմիածինը կոչվեց «Կաթողիկե Եկեղեցի, Մայր Եկեղեցի, Մայր Աթոռ, Սուրբ Էջմիածին»:

Սակայն Էջմիածնի պատմական դերը, նրա գոյության իմաստն ու իրավունքը անհամեմատ ավելի հզորացավ և անհրաժեշտ դարձավ հայ ժողովրդի համար այն դժբախտ օրից, երբ մենք 14-րդ դարում կորցրինք մեր պետականությունը: Այդ ժամանակից Հայ Եկեղեցին փոխարինեց հայ պետությանը, նա դարձավ և կոչվեց հոգևոր իշխանություն, հոգևոր կառավարություն: Եկեղեցու պետը ուներ իր գահը, հրամաններ էր արձակում, կոնդակներ էր ուղարկում, բանադրում էր, սլատժում կրոնապանցներին, ապգուրացներին, անբարոյականներին: Հայ պետության անկումով՝ հայ ժողովուրդը մնաց ամբողջապես իսլամական ժողովուրդների ծովում, ենթարկված անընդհատ արշավանքների ավե-

* Հաճույքով և ուրախությամբ ենք հրատարակում հայ նոր գրականության մեծ դասական Ավետիք Իսահակյանի՝ Մայր Աթոռի արխիվում պահպանված սույն սնտիպ հոդվածը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության դերի մասին՝ գրված 1955 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի ընտրության և օծման առիթով:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

լածություններին և կոտորածներին, բռնակալների հարստահարություններին և կրոնական մոլեռանդ հալածանքներին. միակ ուժը, կորությունը և պաշտպանությունը որ կար, որին ընդունում էին առավել կամ նվազ չափերով իսլամ պետությունները, դա Էջմիածինն էր, կաթողիկոսությունը: Նրա ձեռքումն էին կենտրոնացված ազգային ներքին գործերը, հոգեկան-կուլտուրական բովանդակ կյանքը՝ կրոն, լեզու, բազմաթիվ վանքերը, ուր կային դպրոցներ, ուր մշակվում էր գրականությունը: Դրանք ազգային գոյության վառարաններն էին, որոնք թշնամու աչքից վրիպած, արտաքնապես մոխրով ծածկված կրակի մեջ՝ մշտապես կայծում էին ժողովրդի ազատության բաղձանքները, լուսավոր ապագայի հավատն ու հույսերը:

Այս հզոր ազդակները դարերի իրենց ներուժ գործով պաշտպանեցին հայ ժողովրդին մահմեդական դառնալուց, փրկեցին ձուլվելուց, իբրև ինքնուրույն ազգություն իսպառ ոչնչանալուց:

Հայ պետականության ժամանակ կաթողիկոսն ընտրվում էր հայ թագավորների, նախարարների և հոգևորականների կողմից, նրանցից հետո՝ կաթողիկոսն ընտրվում էր բովանդակ հայ ժողովրդի և հոգևորականների կողմից, որով նա կոչվում էր ամենայն հայոց կաթողիկոս, բոլոր հայերի կողմից ընտրված: Այս իմաստով՝ Հայ Եկեղեցին դեմոկրատիկ և ժողովրդական Եկեղեցու բնույթ ստացավ: Նրան հնազանդվում էր հայրենիքի և պատմության բերումով ամբողջ երկրագնդի վրա ցրված հայությունը իր կուլտուրական-հոգեկան-ազգային բոլոր խնդիրներում: Այսպիսով՝ ցրված հայությունը հանձին Էջմիածնի իր ազգային միությունը ուներ, իր հեղինակավոր պետն ու առաջնորդը:

Ժողովուրդը նեղ օրերում դիմում էր իր Եկեղեցու պետին, ապաստանում էր նրան՝ իշխողների հալածանքներից և հարստահարություններից պաշտպանվելու համար. շատ և շատ անգամ կաթողիկոսի միջամտությունը, աղերսները և թանկ նվերները դադարեցրել են հալածանքները. կաթողիկոսները մեծ հարգ ունեին իշխողների մոտ, հաճախ խորհրդատու էին նրանց, հաշտության միջնորդներ էին իրար հետ կռվող իշխողների միջև: Նադիր պարսից շահի թագադրման հանդեսին մեծ շքով ներկա էր կաթողիկոսը, որը օրհնեց շահի թուրը և կապեց նրա մեջքին:

Սուլթաններն ու շահերը Հայ Եկեղեցու պետի հետ էին բանակցում հայերի վերաբերյալ ընդհանուր գործերի նկատմամբ: Հայ քաղաքականությունն էր վարում նա: Պարսկաստանն ու Թուրքիան ձգտում էին իրենց գրաված տերիտորիայի մեջ ունենալ Էջմիածինը՝ ավելի մեծ ազդեցություն ձեռք բերելու համար հայ ժողովրդի վրա:

Երբ ռուսական ցարերը սկսեցին իջնել հարավ և կռիվ էին մղում թուրքերի և պարսիկների դեմ, անմիջապես ուշք դարձրին Էջմիածնի վրա, որ տակավին՝ գտնվում էր պարսկական իշխանության տակ. Ռուսաստանում ցրված հայերի անունից միջամտեցին Էջմիածնի ներքին գործերի մեջ, դիվանագիտական ճանապարհներով հաջողեցան իրենց թեկնածուն դնել կաթողիկոսական գահի վրա: Էջմիածնի համակրանքը, ուրեմն, բովանդակ հայության համակրանքը, դարձավ Ռուսաստանի կողմը, և, իհարկե, պակաս չէին հայերին ազատագրելու ցարական խոստումները: Եվ նույնիսկ Ներսես կաթողիկոսը հայ կամավորների գլուխն անցած, ռուս բանակի մեջ, կռվում էր Պարսկաստանի դեմ: Եվ առհասարակ կաթողիկոսությունը միշտ էլ նպաստել է հայ ազատագրական շարժումներին թե՛ միջին դարերում և թե՛ նոր դարերում, օրինակ՝ 18-րդ դարում Սյունյաց Դավիթ Բեկի ապստամբությանը և ազատության պայքարին պարսիկ պետության դեմ: Այնքան քաղաքական կշիռ ուներ Էջմիածինը, որ ռուս-պարսկական առաջին պատերազմին, 1804 թվին կռվող կողմերը չեզոք գոտի ճանաչեցին Էջմիածնի տաճարը և նրա շուրջը:

Հայությունը, ուր որ գտնվելիս լիներ, սրտով և հոգով կապված էր Էջմիածնի հետ, օտարության մեջ նրա կարոտն էր քաշում: 1605 թվին պարսից Շահ-Աբաս արքան ավերելով Արարատյան նահանգը՝ բազմահազար հայեր գաղթեցրեց Պարսկաստան առևտուրը և արհեստները իր պետության մեջ զարգացնելու նպատակով. Սպահանի մոտ Նոր քաղաք (Նոր Ջուղա) շինեց նրանց համար՝ տալով զանազան արտոնություններ, սակայն նրանք փարթամության մեջ առանց Էջմիածնի իրենց դժբախտ էին զգում: Շահը մտադրվեց քանդել Էջմիածինը և նրա քարն ու հողը բերելով նոր Էջմիածին կառուցել Սպահանում, բայց հայերի թախանձանքով հրաժարվեց այդ չար մտքից և միայն 15 քար տաճարից տեղափոխեց Սպահան, որ նոր եկեղեցու պատերի մեջ դրին, որոնց առջև նոր ջուղացի հայերը աղոթում, ուխտի էին գալիս, սփոփվում էին իրենց կարոտից ու վշտից:

Ժողովուրդների պատմության մեջ կրոնական հաստատության մի այսպիսի նշանակություն ունենալը հազվագյուտ երևույթ է, սակայն միանգամայն հասկանալի:

Օտար, դաժան պետությունների քմահաճույքներին ենթարկված հայ ժողովրդի հավատ Էջմիածինը՝ եկեղեցիների մայրը, հայրապետական Աթոռը, այս ծանր ու տանջա-

լից դարերի ընթացքում, միակ ազգային հաստատությունն էր, որ տակավին հարատևում էր մնալ հայության ձեռքում: Նա ազգային գոյության խարիսխն էր, ազգային միության սիմվոլը, հայ ժողովրդի կսպված նայրենասիրական զգացմունքը ելք էր գտնում նրա մեջ: Կրոն և ազգություն սինոնիմներ էին դառել: Ստրկացած ժողովուրդը իր սարդկային իրավունքները, հույսերը, երազանքները մարմնացրել էր նրա մեջ:

Դրա համար հայերը բոլոր սրտով գուրգուրում էին նրան, նախանձախնդիր էին նրա գոյության և փառքին: Հեռավոր տեղերից ուխտ էին գալիս, նրան հարուստ նվերներ էին ուղարկում, գումարներ և ինչքեր էին կտակում: Նրա տոնը ազգային ամենահանդեսավոր տոնն էր ամենուրեք, ուր որ հայ կար: Հին և նոր բանաստեղծները, գուսաններն ու աշուղները բազմաթիվ երգեր, գովքեր են նվիրել նրան: Բոլոր հանդեսներում և խնջույքներում առաջին բաժակը Էջմիածնի համար էին բարձրացնում և ոտքի վրա երգում էին հինավուրց երգերը նրան ձոնված.

— Էջմիածինը Հորից է (Աստծուց, Աստծու կողմից)
Եվ փառքի լույսը նրա հետ է:
— Միշտ անշարժ պահիր
Աթոռն հայկազնյա (հայոց ազգի):

Հայերը Էջմիածնի անունով էին երդվում, և այդ երդումը հավասար էր Աստծու անունով երդումին:

Եվ վերջապես, երբ Էջմիածնին վտանգ էր սպառնում՝ հայերը ինչքան էլ որ ընկճված լինեին, կենքով կանգնում էին նրան պաշտպան, ինչպես եղավ, օրինակի համար, 1903 թվին, երբ ցարական կառավարությունը գրավեց եկեղեցու կալվածքները, ժողովուրդը սենքի դիմեց. արյուն թափվեց երկու կողմից, և կառավարությունը ստիպված վիջեց և վերադարձրեց կալվածքները՝ խաղաղեցնելու համար ըմբոստացած ժողովրդին:

Հայ ժողովուրդը բոլոր դարերում միշտ էլ, անընդհատ, իր ազգային գոյության համար, նրա սյրինցիպների՝ պետության, հողի, լեզվի, կրոնի, կուլտուրայի պահպանության համար կռիվ է մղել. և որովհետև պետությունը կորցնելուց հետո նա ազգային գոյության պրինցիպները ամփոփել էր Եկեղեցու մեջ, ուստի՝ Եկեղեցու պաշտպանության համար մղված կռիվը նա համարել է ազգային գոյության պաշտպանության կռիվ:

Գրությունս լրացնելու համար մի-երկու խոսք էլ Էջմիածնի կատարած գրական-կրթական դերի մասին: Շատ մեծ է և անգնահատելի նրա դերը այդ բնագավառում: Առաջին տպարանը հայ հողի վրա իր թղթերի գործարանով միասին բացվեց Էջմիածնում 18-րդ դարում: Շատ կրոնական, պատմական, գիտական, քաղաքական գրքեր լույս տեսան այդ տպարանից: Էջմիածինը ունեցավ իր ամսագիրը, որ տևեց երկար տարիներ: Ունեցավ իր հոգևոր դպրոցը և ապա Գևորգյան ճեմարանը, որոնք մատակարարեցին ժողովրդին ընտիր ուսուցիչներ, եկեղեցականներ, գրողներ և գործիչներ: Օրինակի համար, մեր նոր գրականության հիմնադիրը՝ Խ. Աբովյանը հոգևոր դպրոցի ուսումնավարտ էր: Էջմիածնի նշանավոր գործերից մեկը, որին հավիտյան շնորհակալ պիտի լինենք, այն էր, որ նա հավաքեց և պահեց իր ամուր պատերի մեջ, փրկելով վերջնական կորստից, մեր դարերի հոգեկան գանձը—10,000 հին ձեռագրներ՝ մագաղաթյա ու թղթյա, որոնք տեղափոխված են Երևան և պահվում են աշխարհին հայտնի հայ պետական Մատենադարանում:

Մեր պետության անկումից հետո՝ Էջմիածնի պատմությունը մեր վեց դարերի հայոց ժողովրդի պատմությունն է, անբաժան մեկը մյուսից:

Էջմիածինը, իբրև հոգևոր իշխանություն, նկատի առնելով խավար ու բռնակալ դարերի հանգամանքները և կարելիությունները, թերևս իր կարողացածից ավելի պատվով կատարեց իր ազգապաշտպան դերը մինչև Սովետական Հայաստանի ստեղծումը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հաղթանակով հայ ժողովուրդը վերըստին ձեռք բերեց իր կորցրած պետականությունը, տեր դարձավ իր հողին, իրավունքներին և ճակատագրին, և իր կուլտուրական-տնտեսական բոլոր ֆունկցիաները մտան նորմալ զարգացման ուղիների մեջ: